



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 250-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Գարիկ Պարմենի Վանյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1.Գարիկ Պարմենի Վանյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 8-րդ փողոց, թիվ 9 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25042022-07-0035 վկայական, տրված 2022 թվականի ապրիլի 25-ին)՝ 651,0 քառ.մետր, մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 12-րդ փողոց, թիվ 3 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25042022-07-0099 վկայական, տրված 2022 թվականի ապրիլի 25-ին)՝ 252,0 քառ.մետր մակերեսներով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 8-րդ փողոց, թիվ 9:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գարիկ Պարմենի Վանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 28
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 249-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Կարմեն Կոլյայի Հակոբյանի (ծնված՝ 1961 թվականի ապրիլի 23-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 20-րդ տեղամասի թիվ 27 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082023-07-0060 վկայական, տրված 2023 թվականի օգոստոսի 24-ին, անհատ ձեռնարկատեր Աշոտ Գուրգենի Հակոբյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 23-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023NG2P25, մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 13-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Աշոտ Գուրգենի Հակոբյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Կարմեն Կոլյայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 20-րդ տեղամասի թիվ 27 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2020 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 115,11 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Կարմեն Կոլյայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 20-րդ տեղամասի թիվ 27 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված այգետնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

որոշում եմ.

1.Կարմեն Կոլյայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 20-րդ տեղամասի թիվ 27 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 172-րդ թաղամաս, թիվ 18:

2.Կարմեն Կոլյայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 172-րդ թաղամասի թիվ 18 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2020 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 115,11 քառ.մետր, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 226 652 (երկու հարյուր քսանվեց հազար վեց հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Կարմեն Կոլյայի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 28

գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 248-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Հայկ Սուրենի Հովհաննիսյանի, Էմմա Ռիդոյի Մկրտչյանի, Արթուր Հայկի Հովհաննիսյանի, Արտակ Հայկի Հովհաննիսյանի և Աննա Հայկի Հովհաննիսյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Հայկ Սուրենի Հովհաննիսյանին, Էմմա Ռիդոյի Մկրտչյանին, Արթուր Հայկի Հովհաննիսյանին, Արտակ Հայկի Հովհաննիսյանին և Աննա Հայկի Հովհաննիսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոց 16-րդ նրբանցք թիվ 16 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված կառուցապատված 758,0 քառ.մետր մակերեսով թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, 16-րդ նրբանցք թիվ 1, թիվ 2 առանձնացվող կառուցապատված հատվածին՝ 370,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 67:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Հայկ Սուրենի Հովհաննիսյանին, Էմմա Ռիդոյի Մկրտչյանին, Արթուր Հայկի Հովհաննիսյանին, Արտակ Հայկի Հովհաննիսյանին և Աննա Հայկի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 28
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 247-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, **որոշում եմ.**

1. Թույլատրել Գայանե Վարդանի Առուստամյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 22 հասցեի հողամասում 2022 թվականի մարտի 9-ի թիվ 38 շինարարության թույլտվությամբ տրված երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինությունների և քարե պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2027 թվականի փետրվարի 28-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Վարդանի Առուստամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 28
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 246-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Հարություն Խաչատուրի Խաչատրյանի և Հասմիկ Քաջիկի Խաչատրյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Հարություն Խաչատուրի Խաչատրյանին և Հասմիկ Քաջիկի Խաչատրյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջովք գյուղի 4-րդ փողոց թիվ 1 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված 2826,3 քառ.մետր մակերեսով թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 4-րդ փողոց, թիվ 1, թիվ 2 առանձնացվող հատվածին 700,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 5-րդ փողոց, թիվ 2/1:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Հարություն Խաչատուրի Խաչատրյանին և Հասմիկ Քաջիկի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 28
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 245-Ա

**ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի կարիքների համար մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքների շահագործման ընդունելու նպատակով (գնման պայմանագիր՝ «ԿՄՋՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/2»), **որոշում եմ.**

1.Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- | | |
|--|---|
| Վահե Սիրականյան | - աշխատակազմի գլխավոր մասնագետ (նախագահ, գնումների պատասխանատու ստորաբաժանման ղեկավար), |
| «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ | - Հեղինակային հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| «Աստիճան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ | - Տեխնիկական հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչ | - Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ | - Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ | - Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ | - Կապալառուի կողմից ներկայացվող չափագրող (հաշվառող), |
| Գևորգ Գրիգորյան | - «Գրիգորյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (գլխավոր կապալառու): |

2.Հանձնարարել հանձնաժողովին, ուսումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտը:

3.Ընդունող հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել Ջրվեժի համայնքապետարանի շենքում, հասցեն՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց 76:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. փետրվարի 28
գ. Ջրվեժ



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2024 թվականի N 244-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՅԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռոբերտ Լևոնի Հովհաննիսյանի (ծնված՝ 1986 թվականի սեպտեմբերի 25-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 գանգվածի 14-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2503832 վկայական, տրված 2008 թվականի մայիսի 7-ին, անհատ ձեռնարկատեր Վահան Մինասի Գևորգյանի կողմից 2023 թվականի նոյեմբերի 14-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023QEUDKL, մուտքագրված 2023 թվականի դեկտեմբերի 12-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վահան Մինասի Գևորգյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ռոբերտ Լևոնի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 գանգվածի 14-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2016 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 162,37 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 7,88 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 10,16 քառ.մետր, թիվ 4 օժանդակ շինությունը՝ 5,05 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 0,79 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ռոբերտ Լևոնի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 գանգվածի 14-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Ռոբերտ Լևոնի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 գանգվածի 14-րդ թաղամասի թիվ 27 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 152-րդ թաղամաս, թիվ 24:

2.Ռոբերտ Լևոնի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 152-րդ թաղամասի թիվ 24 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2016 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 162,37 քառ.մետր,

թիվ 2 ծածկը՝ 7,88 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 10,16 քառ.մետր, թիվ 4 օժանդակ շինությունը՝ 5,05 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 0,79 քառ.մետր, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 347 919 (երեք հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառուցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռոբերտ Լևոնի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



A handwritten signature in blue ink, written over the official stamp.

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 28
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2024 թվականի N 243-Ա

**ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵՍՐՈՔԻ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 24-րդ փողոցի թիվ 3 տան բնակիչ Վարդուհի Մեսրոբի Մանուչարյանի վերաբերյալ, այն է՝ Վարդուհի Մեսրոբի Մանուչարյանը բնակվում է քրոջ՝ Սիլվա Մեսրոբի Մանուչարյանի հետ, վերջինիս պատկանող տանը, հանդիսանում է 2-րդ կարգի հաշմանդամության թոշակառու, չի աշխատում, ամուսնացած չէ, չունի զավակներ, քույրը՝ Սիլվա Մեսրոբի Մանուչարյանը՝ նույնպես թոշակառու է, ունի առողջական խնդիրներ, որի պատճառով ներկայումս չի աշխատում և ընտանիքի ֆինանսական ու սոցիալական վիճակից ելնելով Վարդուհի Մեսրոբի Մանուչարյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, **որոշում եմ.**

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Վարդուհի Մեսրոբի Մանուչարյանին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վարդուհի Մեսրոբի Մանուչարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2024 թվականի N 242-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Տիգրան Վաղարշակի Ասատրյանի (ծնված՝ 1970 թվականի սեպտեմբերի 21-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 63/1 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17072014-07-0061 վկայական, տրված 2014 թվականի հուլիսի 17-ին, «Սեյսմիկ Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի դեկտեմբերի 1-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնական կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024KZ387Z, մուտքագրված 2024 թվականի հունվարի 31-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Սեյսմիկ Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Տիգրան Վաղարշակի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 63/1 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2013 թվականին ինքնական կառուցվել է թիվ 1 աստիճանահարթակը՝ 7,0 քառ.մետր և թիվ 2 պարիսպը՝ 13,8 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա են ինքնական բացված թվով ինը պատուհան, թվով երկու դուռ և ինքնական փակված թվով երկու դուռ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Տիգրան Վաղարշակի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 63/1 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված շինությունների, ինքնական բացված թվով ինը պատուհանների, թվով երկու դռների և ինքնական փակված թվով երկու դռների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնական շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Տիգրան Վաղարշակի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 63/1 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2013 թվականին ինքնական կառուցված թիվ 1 աստիճանահարթակը՝ 7,0 քառ.մետր, թիվ 2 պարիսպը՝ 13,8 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև ինքնական բացված թվով ինը պատուհանները, թվով երկու դռները և ինքնական փակված թվով երկու դռները, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 77 063 (յոթանասունյոթ հազար վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Տիգրան Վաղարշակի Ասատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2024 թվականի N 241-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Գևորգ Նորայրի Ենգիբարյանի լիազոր անձ Անդրանիկ Վահանի Էլմասյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1.Գևորգ Նորայրի Ենգիբարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջովք գյուղի 15-րդ փողոց թիվ 2 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված 503,9 քառ.մետր մակերեսով թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2, թիվ 2 առանձնացվող հատվածին՝ 503,3 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/12, թիվ 3 առանձնացվող հատվածին՝ 501,6 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/11, թիվ 4 առանձնացվող հատվածին՝ 500,6 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/10, թիվ 5 առանձնացվող հատվածին՝ 500,5 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/9, թիվ 6 առանձնացվող հատվածին՝ 503,2 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/8, թիվ 7 առանձնացվող հատվածին՝ 502,4 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/7, թիվ 8 առանձնացվող հատվածին՝ 502,9 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/6, թիվ 9 առանձնացվող հատվածին՝ 527,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/5, թիվ 10 առանձնացվող հատվածին՝ 501,8 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/4, թիվ 11 առանձնացվող հատվածին՝ 502,8 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/3, թիվ 12 առանձնացվող հատվածին՝ 500,2 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/2 և թիվ 13 առանձնացվող հատվածին՝ 500,5 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք, 15-րդ փողոց, թիվ 2/1:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Գևորգ Նորայրի Ենգիբարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2024 թվականի N 240-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Բագրատ Զավենի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 8 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Շինարարության թույլտվություն կտրամադրվի աշխատանքային նախագծում ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանների առկայության դեպքում:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Բագրատ Զավենի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2024 թ. փետրվարի 27
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2024 թվականի N 239-Ա

ԳՐԻՀԱ ՎԱՀԱԿԻ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տան բնակիչ Գրիշա Վահակի Մարուքյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Գրիշա Վահակի Մարուքյանը ներկայումս բնակվում է ընտանիքի 2 անձով, ինքը և կինը՝ Ռիտա Պավելի Մարուքյանը թոշակառուներ են, չեն աշխատում, ունեն առողջական խնդիրներ և ընտանիքի ֆինանսական վիճակից ելնելով Գրիշա Վահակի Մարուքյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, **որոշում են.**

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Գրիշա Վահակի Մարուքյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գրիշա Վահակի Մարուքյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

